

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԳԻՐԲ. Ա. տարի *)

(Հրատ. «Համազգային Ընկերութեան» .

Հանելի արտաֆինով այս տարեգիրքին մէջ տեղ են գտած բազմաթիւ աւագ եւ երիտասարդ գրիչներ :

Տարեգիրքը ունի գրականութեան, ֆննադատութեան, ուսումնասիրութիւններու, պատմագիտութեան-բանասիրութեան, գիտութեան եւ գեղարւեստի բաժիններ ինչպէս նաեւ գրական արձագանգ ու հայ կեանքի տեսութիւններ :

Ամէնէն արժէփառքն այս բաժիններու մէջ, անկասկած, գրական ֆննադատութեան եւ պատմագիտութեան նւիրած մասն է, որուն մէջ, տեղ ունին Յ. Օշականը, Ե. Տէր-Անդրէասեանը, Գ. Մխիթարեանը, Մ. Թէօդէօլեանը, Յ. Իրազեկը եւ Ռ. Բերքերեանը :

Հետաքրքրական են, մասնաւորապէս, Գ. Գիւզալեանի «Հայ Մշակոյթի վարիչը ըստ Ստ. Նազարեանի», Ա. Խոնդկարեանի «Գրական շարժում Հայաստանում», Յ. Ճ. Սիրունիի «Արեւելքն ու արեւմուտքը հայ հոգիին մէջ» ուսումնասիրութիւնները :

Պատմագիտական բաժինը գրեթէ ամբողջովին կը պարունակէ կարեւոր նիւքեր եւ ուսումնասիրութիւններ : Անշուշտ Տարեգիրքի ծաւալը բոյլ չի տար նիւքերու աւելի ընդարձակման, ինչպէս եւ լայն ուսումնասիրութիւններու : Գրականութեան բաժինն մէջ տեղ են գրտած Հր. Զարդարեանի, Լասի, Տարօնեանի, Մեհեանի եւ Սօս-Վանիի փոքրիկ պատմածները : Զափածոյ գրածներու մէջ շատ գեղեցիկ է Համաստեղի «Տումար Մախական»-ը եւ Ամէն-Անուշի ջերմութեամբ լեցուն «Արմենիա» փերքածը :

«Համազգայինի Տարեգիրքը» մինչեւ այժմ լայն տեսած տարեգիրքերու մէջ նորութիւն մըն է իր նոյնութեամբ, նիւքերու բազմազանութեամբ եւ լրջութեամբ : Գիրքը զարդարած է աշխատակիցներու պատկերներով : Վ. Փ.

*) *Խմբագրութիւնս, ղ ժբախտաբար հաճոյքը չունեցաւ ստանալու տարեգիրքէն. բարեկամէ մը ձեռք բերինք :*

